ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____2019թ. N ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

<<ՊԱՐԱ.TV>> - Ի ԼՐԱԳՐՈՂ
ԱՆՈՒՇ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մուրադյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2019 թվականի դեկտեմբերի 26-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 8079) Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում մարզպետի, նրա տեղակալների և մյուս աշխատողների պարգևատրման գումարի չափի, 13-րդ աշխատավարձի, պետական բյուջեով նախատեսված պարգևատրման ֆոնդի մասին տեղեկատվություն չենք կարող տրամադրել, քանի որ մարզպետարանում կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Ինչպես նաև <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները (վարձատրության մասին տեղեկատվությունը), առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող տրամադրվել:

Ինչ վերաբերվում է ՀՀ Վայոց ձորի նախկին մարզպետ Տրդատ Սարգսյանի վերաբերյալ վերը նշված հարցի կապակցությամբ տեղեկություններ տրամադրելուն, հայտնում ենք, որ Տ.Սարգսյանը ներկայումս մարզպետարանում չի զբաղեցնում որևէ հաստիքային միավոր, ուստի չենք կարող ստանալ նրա դիրքորոշումը անձնական տվյալները փոխանցելու վերաբերյալ:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ս.Մխիթարյան, Հեռ. (0281) 2 55 95